«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-237-25.07.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) սահմանել պահանջ, որի համաձայն՝ ազգությամբ հայերի՝ քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ դիմումները կքննարկվեն **երեքամսյա** ժամկետում՝ ընդհանուր կանոնի **վեցամսյա** ժամկետի փոխարեն:

Կառավարությունը մեծապես կարևորում է քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ դիմումների քննարկման ժամկետների հետևողական կրճատումը, սակայն ներկա փուլում առաջարկվող ժամկետի կրճատումը կարող է խնդրահարույց լինել քաղաքացիության տրամադրման դիմումներին պատշաճ ընթացքն ապահովելու տեսանկյունից: Բանն այն է, որ իրավասու պետական մարմինների վիճակագրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում և Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում տարեկան ներկայացվում են մոտ 10.000 դիմումներ, որոնց ճնշող մեծամասնությունը՝ մոտ 95 տոկոսը, կազմում են ազգությամբ հայերի կողմից ներկայացված քաղաքացիության ձեռքբերման դիմումները: Բացի այդ, Կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի N 498-Ն որոշմամբ սահմանված է քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության կարգ, որով ևս որոշակի ժամկետներ են նախատեսվում հանձնաժողովի գործունեության համար:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, Կառավարությունը նախաձեռնել է քննարկվող հարաբերությունները կարգավորող օրենսդրության համակարգային վերանայման

գործընթաց: Այս առումով, թեպետև կարևորում ենք Նախագծով առաջարկվող փոփոխության անհրաժեշտությունը, սակայն գտնում ենք, որ նախատեսված ընթացակարգը լիարժեք ձևով կիրառելու համար անհրաժեշտ է Օրենքում մի շարք այլ փոփոխություններ կատարել նաև համապատասխան մեխանիզի ներդրման մասով: Այդ կապակցությամբ առաջարկում ենք ձեռնպահ մնալ ներկայացված նախագծի ընդունումից, հաշվի առնելով այն, որ առաջիկայում Կառավարությունը Ազգային ժողովի քննարկմանը կներկայացնի քաղաքացիության տրամադրման հետ կապված օրենսդրության ամբողջական վերանայման վերաբերյալ օրենքների նախագծերի փաթեթ: